Գործ 3832-2007
ք. Երևան

# Վ Ճ Ի Ռ
## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հետևյալ կազմով՝

Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան
Դատավորներ՝ Տ. Սահակյան
Մ. Աստոյան
Քարտուղարությամբ՝ Լ. Դավթյան
Մասնակցությամբ՝
Հայցվորի ներկ.՝ Ա. Պետրոսյան
(անձն. AA 0291753, տրված 13.03.96թ., 019-ի կողմից )
Պատասխանողի ներկ.՝ Ա. Խաչատրյան
(անձն. AE 0507226, տրված 25.04.2000թ., 012-ի կողմից )
Երրորդ անձի ներկ.՝ Ա. Մկրտչյան
(սոց. քարտ թիվ 6204830376, տրված 19.02.2005թ. )
Վերաքննիչ բողոք բերող՝ Ա. Շահնազարյան

2007թ. նոյեմբերի 30-ին Երևանում, դռնբաց դատական նիստում, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի (դատ.՝ Ս. Թադևոսյան) 20.09.07թ. թիվ 2-2815 վճռի դեմ պատասխանողի ներկայացուցիչ Ա. Շահնազարյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի հիման վրա քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի Արմինե Խաչիկի Խաչատրյանի ընդդեմ ՀՀ՝ ի դեմս ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, դատարանի որոշմամբ պատասխանողի կողմում որպես երրորդ անձ ներգրավված ՀՀ պաշտպանության նախարարության՝ կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին:

Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է

Դիմելով դատարան՝ հայցվորը նայտնել է, որ Էդվին Վարդանի Զոհրաբյանի հետ փաստական ամուսնության մեջ է գտնվել 26.12.2002 թ.-ից սկսած: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ունեցել են երկու երեխա /Վարդան Էդվինի Զոհրաբյան, ծնվ.՝ 17.11.2003թ. և Էրիկա Էդվինի Զոհրաբյան, ծնվ՝ 01.09.2006թ./: 12.10.2006թ. ժամը 7:30 սահմաններում ՀՀ ՊՆ թիվ 90 453 զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային Ավետիս Իսաիի Մկրտչյանն իրեն ամրակցված <<ՈՒրալ -4320>>մակնիշի ՊՆ 1868Տ զինհամարանիշի ավտոմեքենայով Երևան-Սևան ճանապարհի 10-րդ կմ-ի հատվածում դուրս է եկել հանդիպակաց ուղեմաս և ընդհարվել նույն ճանապարհով երթևեկող իր ամուսնու Էդվին Վարդանի Զոհրաբյանի <<Վազ 2106> մակնիշի 12 SO 319 պետհամարանիշի ավտոմեքենային. Էդվին Զոհրաբյանը տեղափոխվել է Միքայելյանի անվան ԲԿ, որտեղ էլ մահացել է:

Երևանի կայազորի զինվորական դատախազության կողմից դեպքի առթիվ հարուցվել է թիվ 90205706 քրեական գործը: Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից 19.02.2007թ. կայացրած թիվ 1-2-42 դատավճռով դատարանը Ավետիս Իսաիի Մկրտչյանին ճանաչել է մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով և վերջինիս դատապարտել է ազատազրկման երեք տարի վեց ամիս ժամկետով, տրանսպորտի միջոց վարելու իրավունքից զրկումով երկու տարի ժամկետով: ՀՀ ՊՆ թիվ 90 453 զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային Ավետիս Իսաիի Մկրտչյանի հանցավոր գործողությունների հետևանքով Էդվին Զոհրաբյանի երկու երեխաները՝ Վարդան Էդվինի Զոհրաբյանը, ծնված՝ 17.11.2003թ. և Էրիկա Էդվինի Զոհրաբյանը, ծնված

...թ. վերցվել են գերակրողից և այժմ գտնվում են իր խնամքի տակ: Քանի որ, ինքը զբաղված է երեխաների խնամքով ուստի չի աշխատում և, ինչի հետևանքով զրկվել է իր երեխաների ապրուստի միջոցները հոգալու հնարավորությունից: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի, 1058-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն եւ այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետեւանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից: Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաեւ իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ և 362-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջների՝ համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե անբաժանելի է պարտավորության առարկան: Պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Համաձայն նույն օրենսգրքի 1062-րդ հոդվածի 1-ին մասի և 1077-րդ հոդվածի պահանջների՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս պատճառված վնասը: Պայմանագրային պարտավորություններ, ինչպես նաեւ զինվորական ծառայություն, ոստիկանական ծառայություն եւ այլ համապատասխան պարտականություններ կատարելիս քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցվում է սույն գլխով նախատեսված կանոններով, եթե պատասխանատվության ավելի բարձր չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Համաձայն նույն օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի՝ իրավաբանական անձինք եւ քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետեւանքով: Առավել վտանգի աղբյուրի տիրոջը դատարանը կարող է նաեւ լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ սույն օրենսգրքի 1076 հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված հիմքերով: Վնասը հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք եւ այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: Համաձայն նույն օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 1063-րդ և 1065-րդ հոդվածների պահանջների՝ պետական մարմինները Հայաստանի Հանրապետության անունից իրենց գործողություններով կարող են գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել, ինչպես նաեւ դատարանում հանդես գալ իրենց իրավասության շրջանակներում: Քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետեւանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Այն դեպքերում, երբ սույն օրենսգրքին կամ այլ օրենքներին համապատասխան վնասը հատուցվում է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից, նրանց անունից հանդես են գալիս համապատասխան ֆինանսական մարմինները, եթե այդ պարտականությունը, սույն օրենսգրքի 129 հոդվածի 3-րդ կետին համապատասխան, դրված չէ այլ մարմնի, իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Համաձայն ՀՀ կառավարության 11.07.2002թ. թիվ 1460-Ն՝ <<Հայաստանի Հանրապետության Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին>>որոշման 2-րդ բաժնի 8-րդ կետի ծդ/ ենթակետի 3-րդ մասի պահանջի՝

Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ժդ) պետական մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության կամ դատարանի ապօրինի գործողություններով քաղաքացիներին, իրավաբանական անձանց պատճառված վնասի հատուցման պահանջներով ընդդեմ պետության ներկայացված հայցերով դատարանում որպես պատասխանող հանդես գալը:

Հետևաբար, ՀՀ ՊՆ թիվ 90 453 զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային Ավետիս Իոսիֆի Մկրտչյանի հանցավոր գործողությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է համապարտության կարգով հատուցման ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության և ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ ենթակետերի պահանջների՝ տուժողի (կերակրողի) մահվան դեպքում վնասի հատուցման իրավունք ունեն՝ մահացողի խնամքի ներքո գտնվող կամ նրա մահվան օրը նրանից խնամք ստանալու իրավունք ունեցող անաշխատունակ անձինք, ծնողներից մեկը, ամուսինը կամ ընտանիքի անդամը՝ անկախ նրա աշխատունակությունից, որը չի աշխատում և զբաղված է մահացածի խնամքի ներքո գտնվող նրա տասնչորս տարեկան չդարձած կամ թեկուզև նշված տարիքին հասած, սակայն բժշկական մարմինների եզրակացությամբ իր առողջական վիճակով կողմնակի խնամքի կարիք ունեցող երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով: Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի 1-ի և 2-րդ ենթակետերի պահանջի՝ վնասը հատուցվում է՝ անչափահասներին՝ մինչև տասնութ տարեկան դառնալը. տասնութ տարեկանից բարձր տարիքի սովորողներին՝ մինչև ցերեկային ուսուցման ձևով ուսումնական հաստատություններում ուսման ավարտը, սակայն ոչ ավելի, քան մինչև քսաներեք տարեկան դառնալը.

Համաձայն նույն օրենսգրքի 1082-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջի՝ կերակրողի մահվան հետ կապված վնասի հատուցման իրավունք ունեցող անձանց վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1079 հոդվածի կանոններով սահմանված՝ մահացածի աշխատավարձի (եկամտի) այն մասի չափով, որը մահացածի կենդանության օրոք նրանք ստանում էին կամ ստանալու իրավունք ունեին իրենց ապրուստի համար: Այդ անձանց վնասի հատուցման չափը որոշելիս մահացածի եկամուտների կազմում աշխատավարձի (եկամուտների) հետ միասին ներառվում են կենդանության օրոք ստացած նրա կենսաթոշակը և այլ նմանօրինակ վճարները:
Վնասի հատուցման չափը որոշելիս կերակրողի մահվան հետ կապված անձանց նշանակված կենսաթոշակը և թոշակների այլ տեսակները, որոնք նշանակվել են, ինչպես կերակրողի մահվանից առաջ, այնպես էլ հետո, ինչպես նաև այդ անձանց կողմից ստացվող աշխատավարձը (եկամուտը) և կրթաթոշակը չեն հաշվարկվում նրանց վնասի հատուցման հաշվին:

Համաձայն նույն օրենսգրքի 1084-րդ հոդվածի և 1085-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի՝ տուժողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարը կյանքի թանկացման դեպքում, օրենքով սահմանված կարգով, ենթակա է ինդեքսավորման:Նվազագույն աշխատավարձի չափը բարձրացնելու դեպքում կորցրած աշխատավարձի (եկամտի) և տուժողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ կապված այլ վճարների գումարները մեծանում են աշխատավարձի նվազագույն չափի բարձրացմանը համամասնորեն (հոդված 357): Վնասի հատուցումը՝ կապված տուժողի աշխատունակության նվազելու կամ մահվան հետ, կատարվում է ամենամսյա վճարներով:

Հարգելի պատճառների առկայության դեպքում դատարանը, վնաս պատճառողի հնարավորությունների հաշվառմամբ, կարող է վնասի հատուցման իրավունք ունեցող քաղաքացու պահանջով նրան տրվելիք վճարները հատկացնել միանվագ, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար:

Համաձայն նույն օրենսգրքի 1079-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության պահանջի՝ աշխատավարձի /եկամտի/ բոլոր տեսակները հաշվի են առնվում մինչև հարկային պահումները եղած չափով:

Էդվին Վարդանի Զոհրաբյանը 12.10.2006թ. դրությամբ աշխատել է <<Լ. Օրբելու>> անվան համալսարանում՝ որպես ուսումնական մասով պրոռեկտոր, կադրերի բաժնի պետ, դեկան և դասախոս:

Համաձայն<<Լ. Օրբելու>> անվան համալսարանի կողմից 20.11.2006թ. տրված թիվ 222/019 տեղեկանքի՝ Էդվին Վարդանի Զոհրաբյանի ամսական միջին աշխատավարձը կազմել է 128 000

x 36 /ամիսների թիվը/ 4 608 000 /չորս միլիոն վեց հարյուր ութ հազար/ դրամ:

Խնդրել է Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ Պաշտպանության նախարարության համապարտությամբ հօգուտ իր վստահորդի՝ որպես տուժողի երեխաներին խնամողի և նրա մանկահասակ երեխաներ 17.11.2003թ. ծնված Վարդան Էդվինի Զոհրաբյանի և 01.09.2006թ. ծնված Էրիկա Էդվինի Զոհրաբյանի բռնագանձել 4 608 000 դրամ՝ քառ ամիսների 12.10.2006-12.10.2009թթ. ընկած ժամանակահատվածի համար որպես կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում՝ կյանքի հետագա թանկացման և /կամ/ դրամի արժեզրկման դեպքում վնասի չափի հետագա վերահաշվարկման պայմանով:

Վերաքննիչ դատարանում հայցվորի ներկայացուցիչը հայցը պնդեց և խնդրեց այն բավարարել:

Պատասխանող ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ Մակիչ Մանուչարյանը /վկայական 897/ հայցի դեմ առարկեց մասնակի, հայտնելով, որ ներկայացված հատուցման ենթակա վնասի չափը անհամեմատ ավելին է, քան օրենքով սահմանված չափը, քանի որ երեխաները իրավունք ունեն պահանջելու կերակրողի մահվան հետ կապված վնասի հատուցում մահացածի աշխատավարձի այն մասի չափով, որը մահացածի կենդանության օրոք իրավունք ունեին ստանալ նրանց ապրուստի համար, իսկ այդ պարտադիր չափը համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69 հոդվածի երկու երեխաների համար կազմում է ծնողի վաստակի 1/3, տվյալ դեպքում 128.000 դրամի 1/3՝ մոտ 42.700 դրամ, մինչդեռ հայցվորի կողմից ներկայացվել է այդ վաստակի ամբողջ չափով: Հայցվորը վնասի հատուցման իրավունք չունի, քանի որ նրանց ամուսնությունը գրանցված չի եղել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում, իսկ օրենքի համաձայն ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը: Իսկ եթե նույնիսկ գրանցված լիներ ամուսնությունը, ապա ամուսինների կողմից միմյանց ապրուստի միջոցները հոգալու պարտականությունները կարգավորված են ՀՀ ընտանեկան օրենսգրքի 77-79 հոդվածներով սահմանված կարգով: Հայտնեց, որ տուժողի ամսական ամբողջ վաստակի չափով երեք տարվա համար հաշվարկված վնասի հատուցման հայցվորի պահանջն անհիմն է, խնդրեց այն մերժել:

Երրորդ անձ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Արամ Մկրտչյանը հայցի դեմ առարկեց մասնակի և հայտնեց, որ միանում է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի տրված բացատրություններին:

Խնդրեց հայցը մերժել:

Լսելով կողմերին, ուսումնասիրելով, վերլուծելով և գնահատելով՝ քաղաքացիական գործով ձեռք բերված ապացույցները՝ դատարանը գտավ, որ հայցը ենթակա է մասնակի բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ վերաքննիչ քրեական և զինվորական պալատի դատավճռի 2006թ. հոկտեմբերի 12-ին ժամը 7.30-ի սահմաններում ՀՀ ՊՆ թիվ 90453 զորամասի պայմանագրային զինծառայող Ավետիս Իոսիֆի Մկրտչյանը իրեն ամրացված «Ուրալ- 4320» մակնիշի ՊՆ 1868 Տ պետհամարանիշի ավտոմեքենայով Երևան-Մեծ ճանապարհի 10-րդ կմ թույլ է տվել ՃԵԿ-ի 1.2 և 1.3 կետերի պահանջների խախտող գործողություն դուրս է եկել հանդիպակաց ուղեմաս և բախվել նույն ճանապարհով երթևեկող Վարդանի Զոհրաբյանի «Վազ 2106» մակնիշի 12 SO 319 պետհամարանիշի ավտոմեքենային և պատճառել մահ(գ.թ. 64):

Դատաքննությամբ պարզվեց, որ հայցվոր Արմինե Խաչատրյանը և Էդվին Զոհրաբյանը գտնվել են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ և ունեցել են երկու երեխա՝ 17.11.2003թ. ծնված Վարդան Էդվինի Զոհրաբյանին և 01.09.2006թ. ծնված Էրիկա Էդվինի Զոհրաբյանին (գ.թ. 18,19):

Համաձայն <<Լ. Օրբելու>> անվան համալսարանի գլխավոր հաշվապահի կողմից տրված տեղեկանքի՝ Վարդանի Զոհրաբյանը մինչև մահանալը աշխատել է Աբովյան քաղաքում գտնվող <<Լ. Օրբելու>> անվան համալսարանում և նրա միջին աշխատավարձը կազմել է 128.000 ՀՀ դրամ(գ.թ. 22):

Համաձայն ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի <<Բարեգետ>> համատիրության կողմից տրված տեղեկանքի Արմինե Խաչիկի Խաչատրյանը ոչ մի տեղ չի աշխատել և չի էլ աշխատում և իր խնամքի տակ ունի երկու անչափահաս երեխա՝ 17.11.2003թ. ծնված Վարդան Էդվինի Զոհրաբյանին և 01.09.2006թ. ծնված Էրիկա Էդվինի Զոհրաբյանին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի պարտավորությունները ծագում են նաև վնաս պատճառելու հետևանքով:

Նույն օրենսգրքի 1058-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի իրավաբանական անձը քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս պատճառված վնասը:

Նույն օրենսգրքի 1072-րդ հոդվածի համաձայն իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրի սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածի՝ տուժողի (կերակրողի) մահվան դեպքում վնասի հատուցման իրավունք ունեն՝ մահացողի խնամքի ներքո գտնվող կամ նրա մահվան օրը նրանից խնամք ստանալու իրավունք ունեցող անաշխատունակ անձինք, ծնողներից մեկը, ամուսինը կամ ընտանիքի անդամը՝ անկախ նրա աշխատունակությունից, որը չի աշխատում և զբաղված է մահացածի խնամքի ներքո գտնվող նրա տասնչորս տարեկան չդարձած կամ թեկուզև նշված տարիքին հասած, սակայն բժշկական մարմինների եզրակացությամբ իր առողջական վիճակով կողմնակի խնամքի կարիք ունեցող երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով: Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի 1-ի, 2-րդ և 5-րդ ենթակետերի պահանջի՝ վնասը հատուցվում է՝ անչափահասներին՝ մինչև տասնութ տարեկան դառնալը տասնութ տարեկանից բարձր տարիքի սովորողներին՝ մինչև ցերեկային ուսուցման ձևով ուսումնական հաստատություններում ուսման ավարտը, սակայն ոչ ավելի, քան մինչև քսաներեք տարեկան դառնալը, ծնողներից մեկին, ամուսնուն կամ ընտանիքի այլ անդամներին, որն զբաղված է մահացածի խնամքի տակ գտնվող նրա երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով՝ մինև վերջիններիս տասնչորս տարեկան դառնալը:

Հետևաբար հայցվորը՝ որպես տուժողի անչափահաս երեխաների խնամող մինչև նրանց 14 տարին լրանալը և տուժողի երկու անչափահաս երեխաները մինչև 18 տարին լրանալը պետք է ստանան տուժողի աաշխատավարձի 3/4՝ յուրաքանչյուրը 1/4 մասով:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 1082, 1085 հոդվածների, կերակրողի մահվան հետ կապված վնասի հատուցման իրավունք ունեցող անձանց վնասը հատուցվում է օրենսգրքի 1079 հոդվածի կանոններով սահմանված մահացածի աշխատավարձի (եկամտի) այն մասի չափով, որը մահացածի կենդանության օրոք նրանք ստանում կամ ստանալու իրավունք ունեին իրենց ապրուստի համար: Վնասի հատուցումը կապված տուժողի աշխատունակության նվազելու կամ մահ հետ, կատարվում է ամենամսյա վճարներով: Հարգելի պատճառների առկայության դեպքում դատարանը, վնաս պատճառողի հնարավորությունների հաշվառմամբ, կարող է վնասի հատուցման իրավունք ունեցող քաղաքացու պահանջով նրան տրվելիք վճարները հատկացնել միանվագ, բայց ոչ ավելի քան երեք տարվա համար:

Նկատի ունենալով, որ տուժող Էդվին Զոհրաբյանի երկու փոքրահասակ երեխաները գտնվում են հայցվոր Արմինե Խաչատրյանի խնամքին, այլ կերակրող չունեն և նրանց փոքրահասակ լինելու պատճառով հայցվորը չի կարող աշխատել, ինչի հետևանքով ընտանիքը գտնվում է նյութական խիստ ծանր պայմաններում, դատարանը գտնում է, որ հայցվորին տրվելիք վճարները պետք է հատուցվեն միանվագ, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար: Այսինքն 128000 պետք է բաժանել չորս մասի բազմապատկել երեքի և ստացված գումարն էլ բազմապատկել 36 ամսով, որն էլ հավասար է 3456000 ՀՀ դրամ (128000: 4X3X36=3456000):

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1084 հոդվածի տուժողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարը կյանքի թանկացման դեպքում, օրենքով սահմանված կարգով, ենթակա է ինդեքսավորման: Նվազագույն աշխատավարձի չափը բարձրացնելու դեպքում կորցրած աշխատավարձի (եկամտի) և տուժողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ կապված այլ վճարների գումարները մեծանում են աշխատավարձի նվազագույն չափի բարձրացմանը համամասնորեն (հոդված 357):

Ինչ վերաբերում է պատասխանողի առարկության այն մասին, որ երեխաներն իրավունք ունեն պահանջելու կերակրողի մահվան հետ կապված վնասի հատուցում միայն համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69 հոդվածի, ըստ որի վճարվելիք գումարը երկու երեխաների համար կազմում է ծնողի վաստակի 1/3-ի չափով՝ մոտ 42.700 դրամ, անհիմն է, քանի որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69 հոդվածը կարգավորում է երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը, որը սույն իրավահարաբերություններում կիրառելի չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածով՝ վերաքննիչ դատարանը

<u>Վ Ճ Ռ Ե Ց</u>

Հայցը բավարարել մասնակի:

Բռնագանձել Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, 3456000 (երեք միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ հօգուտ Արմինե Խաչատրյանի և նրա խնամքին գտնվող Վարդան Զոհրաբյանի՝ ծնված 17.11.2003թ. և Երիկա Զոհրաբյանի՝ ծնված 01.09.2006թ., որպես կերակրողին կորցնելու հետևանքով պատճառված վնասի 3 տարվա միանվագ հատուցման գումար՝ սկսած 2006թ. նոյեմբերի 12-ից մինչև 2009թ. նոյեմբերի 12 ընկած ժամանակահատվածի համար:

Այնուհետև բռնագանձումը շարունակել ամսական 96000 ՀՀ դրամի չափով (յուրաքանչյուրին 32000 ՀՀ դրամ) մինչև երեխաների 14 տարին լրանալը:

Երեխաներից յուրաքանչյուրի օգտին բռնագանձվող 32000 ՀՀ դրամ գումար, վնասի հատուցումը շարունակել մինչև երեխաների 18 տարին լրանալը, իսկ սովորելու դեպքում՝ մինչև ուսման ավարտը, բայց ոչ ավելին, քան երեխայի 23 տարեկան դառնալը:

Բռնագանձումը կյանքի թանկացման դեպքում, օրենքով սահմանված կարգով, ենթակա է ինդեքսավորման:

Հայցը մնացած մասով մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան

Դատավոր՝ Տ. Սահակյան

Դատավոր՝ Մ. [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

# ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ

Գործ թիվ 07-3832
«30» նոյեմբերի 2007թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի Արմինե Խաչիկի Խաչատրյանի ընդդեմ ՀՀ՝ ի դեմս ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, դատարանի որոշմամբ պատասխանողի կողմում որպես երրորդ անձ ներգրավված ՀՀ պաշտպանության նախարարության՝ կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի մասին

«30» նոյեմբերի 2007թ.

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել մասնակի:

Բռնագանձել Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, 3456000 (երեք միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ հօգուտ Արմինե Խաչատրյանի և նրա խնամքին գտնվող Վարդան Զոհրաբյանի՝ ծնված 17.11.2003թ. և էրիկա Զոհրաբյանի՝ ծնված 01.09.2006թ., որպես կերակրողին կորցնելու հետևանքով պատճառված վնասի 3 տարվա միանվագ հատուցման գումար՝ սկսած 2006թ. հոկտեմբերի 12-ից մինչև 2009թ. հոկտեմբերի 12 ընկած ժամանակահատվածի համար:

Այնուհետև բռնագանձումը շարունակել ամսական 96000 ՀՀ դրամի չափով (յուրաքանչյուրին 32000 ՀՀ դրամ) մինչև երեխաների 14 տարին լրանալը:

Երեխաներից յուրաքանչյուրի օգտին բռնագանձվող 32000 ՀՀ դրամ գումար, վնասի հատուցումը շարունակել մինչև երեխաների 18 տարին լրանալը, իսկ սովորելու դեպքում՝ մինչև ուսման ավարտը, բայց ոչ ավելին, քան երեխայի 23 տարեկան դառնալը:

Բռնագանձումը կյանքի թանկացման դեպքում, օրենքով սահմանված կարգով, ենթակա է ինդեքսավորման:

| ՊԱՀԱՆՋԱՏԵՐ | ՊԱՐՏԱՊԱՆ |
|---|---|
| Արմինե Խաչիկի Խաչատրյան | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն |
| ք.Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 28 շ., բն. 1 | ք.Երևան, Մելիք-Ադամյան 1 |
| անձն. AF 0244685 տրված 10.02.2001թ., 019-ի կող. | |

Կատարողական թերթը տրված է «03» դեկտեմբերի 2007թ.
Վճիռն օրինական ուժի մեջ է մտել «30» նոյեմբերի 2007թ.
Ծանոթագրություն: Կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել վճռի /դատավճռի/ օրինական ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում:

Դատավոր՝ Ն. Հովսեփյան